

ԿԱՐԾԻՔ

Բենիկ Վարդանի Վարդանյանի ՏՀայկական Լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածի բնակչության սոցիալական կազմը և թաղման ծեսն ըստ ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան դամբարանային համալիրների՝ Է.00.03. - § «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից 3 գլուխներից, որտեղ հաջորդաբար դիտարկվում են Հին Հայաստանի ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան թաղման ծեսի վերակազմության խնդիրները, ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան հասարակության սոցիալական կազմի ուսումնասիրման խնդիրները, ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան թաղման գույքի ուսումնասիրության խնդիրները, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հապավումների ցանկից, հավելվածներից: Մասնավորապես, I հավելվածում գետեղված են քարտեզները, համեմատական աղյուսակները, գծանկարները, գծագրերը, նկարները և վերակազմությունները, II հավելվածում տեղադրված են ձևաբանական աղյուսակները:

Նախաբանում հեղինակը բնորոշում է թե ինչ է թաղման ծեսը, ինչ նպատակներ է այն հետապնդում և ինչ տեղ է այն զբաղեցնում ծեսերի համակարգում: Այնուհետև փորձ է կատարում գնահատել դամբարանային համալիրների ինֆորմատիվությունը թաղման ծեսի և սոցիալական հարաբերությունների վերակազմության համար, իրավացիորեն համաձայնելով այն հեղինակների տեսակետին, որ դամբարանային կառույցը ամբողջովին չի բնորոշում թաղման ծեսը: Այնուհետև հեղինակը նշում է ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները: Հեղինակն անդրադառնում է թեմայի արդիականությանը, նպատակներին և խնդիրներին: Առանձին դիտարկվում է ուսումնասիրության մեթոդաբանությունը: Կարևոր է այն հանգամանքը, որ հեղինակը ներկայացնում է հատկանիշների տիպաբանական կազմը: Մինևույն ժամանակ պարզ է, որ ընդամենը 3 խմբի

ասհմանագատումը բավարար չէ մահվան ալեգորիան բնորոշելու համար: Այնուհետև մանրամասն շարադրվում է հիմնախնդրի ուսումնասիրության արդի վիճակը:


Առաջին գլուխը վերնագրված է Հին Հայաստանի ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան թաղման ծեսի վերակազմության խնդիրները: Գլխում հաջորդաբար ներկայացվում են հենապատ-կրոմլեխները, խուցը, թաղման եղանակը, վերգետնյա կոթողները, կից կառույցները, դամբարանաթումբը: Ընդհանուր առմամբ ճշգրիտ տիպաբանության համատեքստում հարկ է նշել որոշ թերի կողմեր. ա. հենապատ-կրոմլեխ հասկացությունն այդքան էլ ճշգրիտ չէ, քանի որ կրոմլեխը կարող է լինել ինչպես հենապատային բնույթի, այնպես էլ ոչ: Բացի այդ պետք է դիտարկվեին առանձին ցից քարերով շարված, ինչպես նաև փորագրություններով կրոմլեխները, Բ. մարդկային մնացորդներից գուրկ դամբարանների համատեքստում քննել պաշտվող կենդանիների թաղումները մեթոդապես ճիշտ չէ, գ. ֆալիկ կոթողների համատեքստում դիտարկել մարդակերպերը և կտեխները ճիշտ չէ, դ. դիտարկելով կոթողների տեղադրումը դամբարաններում հեղինակը չի անբաղաճում կրոմլեխի միջ կոթողներին, ե. չեն դիտարկվում դրոմոսները, դեպի դամբարան տանող արահետները և այլն:

Երկրորդ գլուխը վերնագրված է ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան հասարակության սոցիալական կազմի ուսումնասիրման խնդիրները: Գլխում մանրամասն դիտարկվում են հնաժողովրդագրության և սոցիալական խնդիրները: Միևնույն ժամանակ գույքի և գոհաբերված կենդանիների առկայությունը դամբարաններում ոչ միշտ ունի տնտեսական նշանակություն, այլ կարող է պայմանավորված լինել պաշտամունքային հանգամանքներով: Բացի այդ, գույքի առատությունը և ննջեցյալի սոցիալական դիրքը ոչ միշտ են ուղիղ համեմատական:

Երրորդ գլուխը վերնագրված է ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան թաղման գույքի ուսումնասիրության խնդիրները: Այստեղ դիտարկվում են ինչպես գուտ ծիսական, այնպես էլ ծիսականացված իրերը: Միևնույն ժամանակ տվյալ իրի ծիսականացումը հաճախ կարելի է որոշել միայն հնագիտական համատեքստից:

Աշխատանքում կան նաև համակարգչային՝ տեխնիկական բնույթի բացթողումներ: Նշված թերացումներով հանդերձ, աշխատանքը, անկասկած, նորարական է ինչպես բնույթով և հետազոտման մեթոդաբանությամբ, այնպես էլ ներգրավված փաստացի նյութով: Աշխատանքը և նրա ձևավորումը, ինչպես և

սեղմագիրը թեմայի շուրջ հրատարակված աշխատանքները լիովին համապատասխանում են ԲՈԿ պահանջներին, իսկ հեղինակը արժանի է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝  Հ. Գ. Ավետիսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, պ.գ.թ.



Լ.Ս. Հովսեփյան